

Յնծաւենց պարտէզներուն վերը: Բաց ի այս ուխտատեղիներէն, ուխտի կ'երթան նաև Երուսաղէմ, աշնան ճամբայ կ'ելնեն, ձմեռն հոն կ'անցընեն և Զատիկն վերջ կը վերադառնան: Ոմանք ալ՝ մասնաւորաբար արք, կ'երթան Մշոյ սուրբ կարապետին: — Նոր Հայ, 301—309. Վ. Քիւնէ, Բ 362—366:

Շարայարեղի Է. ՍՈՒՔԻԱՍ ԷՔՐԻԿԱՆ

Հ Ն Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն

ՊԱՏՄԱՐԱՆ ԱՌ ՊԱՏՆԵՐՆ

(Շար. տես էջ 264)

Ա Ի Ա Ր Տ Ե Լ Ո Վ նախագրեցոց մէջ Ա և Բ դիտողութեանց կրկնութիւնը, այժմ կը մնայ ինձ խօսել մնացելոց վերայ, և նախ երրորդին, թէ քրիստոնէութեան սկիզբն, այն է Ա և Բ դարուց մէջ, միայն կիւսակէ պատարագիւր բացարձակ կարծիք չէ:

Մեծ. Նազարեթեան կը պնդէ վերստին, կը կրկնէ և կ'երեքկնէ, թէ « Առաքելոց և առաքելական երկու դարերուն բացարձակ նուիրական օրն էր կիւսակէն. ինչպիսի չվերջընեմք. այն օր միայն կը խմբուէին ի ժողով, այն է հացի բեկումն »: Իմ այս խօսքս՝ թէ « բացարձակ կարծիք չէ », անշուշտ բացէ ի բաց չմերժէ միայն կիրակէ լինելը, և ոչ հաստատապէս կը պնդէ այլ օր եւս լինելը. այլ կը նշանակէ՝ թէ ստուգելի է: Այսոր

զէմ նա կը յարուցանէ երկար բանից և ծանօթ վկայութեանց մի փոթորիկ, որ երբ պարզի՝ մեք դարձեալ կը յանգիմք այն հետեւութեան՝ թէ « բացարձակ կարծիք չէ միայն կիրակէն »: Այն վկայութիւնք, զորս կը յե՛լէ ի ս. դրոց, Յուստինոսէ և յայլոց, և քան զորս աւելին կարող էր մէջ բերել, կը հաւաստեն կիւսակէի ժողովուն և հացի բեկումն, որոց մասին տարակոյս կամ խնդիր ոչ ոք կը հանէ: Առաքելոց և նոցա ժամանակցաց կիրակէի յեշտատկութիւնը և այլ աւուրց բացարձակ լուծիւնը՝ միանգամայն բաւական կը լինի մեզ կարծելու, թէ քրիստոնէութեան բուն սկիզբը միայն կիրակէն էր ժողովի և պատարագի սահմանուած: Բայց այդ վկայութիւնք, կը կրկնեմ, Բ դարուն համար բացարձակ զօրութիւն չունին: Տեր. առղիւմու ստատիկոնի կամ պահոց երկու աւուրց համար ըսածն՝ « բնկալեալ ի մարմնոյ տեան »\*, այնպէս հեշտ չէ նախաբերելոց պատարագն իմանալ, որ է հաղորդիլ՝ կիրակէն պահուած նշխարէն \*\*: Ձի նախ՝ այս պատարագին ծագումն զօժուրուս կրնայ յի դար հասնիլ, նկատելով այնոր հեղինակները՝ որոց կ'ընծայուի \*\*\*: Երկրորդ՝ որ հնազէտք յունաց միայն կու տան այնոր զօր. ծածուկութիւնն հին ժամանակ \*\*\*\*:

Աւելին կայ: Քրիստոնէութեան առաջին երկու դարուց մէջ ժողով և բեկումն հացի այնպէս կապուած են իրարու հետ, որ մին առանց միւսոյն չկարէ լինել, մին զմիւսն կը մեկնէ: Առաքելոց Գործոց մէջ այդ երկուսը միշտ զոյգ կը գտնուին. « Ինչն հաւնապաղորդեալը վարդապետութեան առաքելոցն և հաղորդութեան և բեկումնոյ հացին և աղօթից » (Բ, 42): « Եւ յաւուրն շարաթուց մինչդեռ ժողովեալ էաք բեկումնոյ զհացն » (Ի, 7). և այլն: Մ. Իգնատիոս առ Եփե.

\* Յաղագս աղօթից, ԺԻ:  
\*\* Այժմ յոյնք քառասնորդաց մէջ միայն ունին զայդ (բաց ի շարաթէ և կիրակէէ): Քառասնորդաց մէջ գործածութիւնը կը յեշուէ և ի ՄԲ կանոնի Տրուղեան ժողովոյն (յամին 692): Իսկ ըստ Զատիկական ժամանակագրոց

(յամին 645) կը գործածուէր նա և յայլ աւուրց ինչ արտաքայ պահոց (հտ. Ա, յէջ 705-6):  
\*\*\* Պարզմտցք. Բ. Տ. Գաթրճեհէ, յէջ 349:  
\*\*\*\* Մարտիրէ, Բառապետ ջրիտ. հնուութ. յէջ 466:

սացիս կը գրէ. « ֆոյթ կալիք ժողովի յա-  
ճախագոյնս վասն Գոճնարեան Աստուծոյ և  
վասն փառաց » (Ղ. ԺԳ). Ս. Յուստինոս որ  
լատագ. առ Անտոնիոս. « Իսկ յաւուրն որ  
կոչի արեգական, զան ժողովիև ամենեքին  
ի մի վայր... իբրև յազօթիցն զագարեմք,  
մատուցանի հաց և գինի և ջուր »: Վար-  
գապետութիւն ժԲ առաք. « բաս կիրակէի  
տեառն ժողովեալ՝ բեկեք հաց ». և այլն: Այս  
երկուց անբաժան զուգընթացութիւնը Պատ-  
կերը լաւ գիտէ, երբ կ'ըսէ կիրակէի հա-  
տար. « Այս օր միայն կը խմբուէին ի ժո-  
ղով, այն է հացի բեկոտմն »:

Արդ, յետ ս. Յուստինոսի կու գայ Բ  
գարուն վերջերն Որիգենէս, որ կ'աւանդէ  
մեզ նոր ժողով մի պարսկեանայ օրն, այն  
է ի հսկման ուրբաթու. « Եւ արգ բանզի  
ժողով ժողովրդեան է վասն պարսկեանայ,  
— և մանաւանդ յաւուր կիրակէի, — յորում  
շարչարանացն Գրիստոսի յիշատակ է, . . .  
աղպչեցէր զաստուածն ամենակալ, զի ե-  
րկեսցէ առ մեզ բան նորա » (յԵս. ճառ Ե):  
Այս ժողովն ուրեմն առանց պատարագի  
կրնար լինել. և Տերտուլիանու « ի մարմնոյ  
տեառն ընդունելն » իրաւունք չունիմք բե-  
կումն հացի իմանալ:

Ուրբաթու այս տօնախմբութիւնը շորեք-  
շաբաթուն չնմանի. զայս նոյն եղանակաւ  
տօնելի չքնէ Որիգենէս: Թէ ինչ կ'ընէին  
այդ աւուր ժողովին, կ'իմանամք այնոր շա-  
բաթակուութենէն Գ գարու մէջ, յորում Եւ-  
սեբի կը նկարագրէ զայն այսպէս. « Մանա-  
ւանդ յաւուր շարչարանաց փրկչին մերոյ  
պահօք և տքնութեամբ և ընթերցումովք  
զրոց սրբոց անցուցանել սովորեցաք » (Պտմ.  
եկ. Բ. ԺԵ). Իսկ իւր հայրենակիցը ս. Բար-  
սեղ առ կեսար պատրիկ թղթոյն մէջ կը  
յաւելու՝ թէ այդ օր պատարագ եւս կը մատ-  
չէր (Թղթ. ՄՁԹ): Ուրբաթու այս ժողո-  
վական պահպանութիւնն, անյիշատակ և ան-  
զոյ առաքելոց ժամանակ, զոր հնարեց Բ

գարն և աւանդեց շորբողին, դիւրն է  
կարծել՝ թէ առանց պատարագի տուաւ և  
վերջինս հնարեց զայն: Գ գարուն մեր մէջ  
իսկ ուրբաթու է միայն պատարագելի յՈւր-  
բաթայրս՝ ըստ Խորենացոյն (Պտմ. Հոբոս.).  
նոյն օրն է դարձեալ Ե գարուն՝ յետ կիւ-  
րակէի՝ ըստ Մանգակունւոյն (ճառ ԻԲ), և  
ոչ շաբաթ կամ մի այլ օր: Ինչո՞ւ այդ  
ժամանակ ուրբաթու է միայն այդպիսի սովո-  
րական եղած ամէն ազգաց մէջ, և ոչ Գ  
գարուն պատարագելի դարձած մի այլ օր,  
ինչպէս էր շորեքշաբաթին կամ շաբաթին,  
և այլն\*: Չայս քնչպէս կարելի է մեկնել,  
եթէ ոչ բարձրագոյն հնութիւն մի տալով  
ուրբաթուն՝ բան այլ աւուրց\*\*:

Պեղիկիա, ինչպէս յառաջ ըսած եմ, Բ  
գարուն ուրբաթու հետ շորեքշաբաթին եւս  
պատարագելի կը քնէ արեւմտեայց մէջ (Հնա-  
խօս. Բ, Թ): Չունենալով ի ձեռքին իւր աղ-  
բիւրը, չկարեմ՝ ըսել աւելի բան այնոր մա-  
սին: Բայց մեք ունիմք հոս գՏերտուլիանոս,  
որ կ'աւանդէ՝ թէ ուրբաթու պէս շորեքշա-  
բաթին այլ պատարագաւ կը լուծուէր յա-  
րեւմուտս:

Պատկերը կը տրամաբանէ. պատարագն  
եկեղեցոյ մէջ հարսանիք մ'է, ուրախու-  
թեան հանդէս, և շորեքշաբաթի և ուրբաթ՝  
պահօք և սպոյ օրեր. իսկ « ստագ և պատա-  
րագ իրարու հականիշ բառեր են քրիստո-  
նէական եկեղեցոյ մէջ, և թէ մինչև եր-  
րորդ պար այս այսպէս կը պահուի »: Ըստ  
Յիսուսի՝ « յորժամ բարձցի ի նոցանէ փե-  
սայն, ապա պահեսցին ». ուստի պահօք օր  
փրկչը չպարտէր ներկայ լինել պատարա-  
գաւ. իսկ նախարբեալ պատարագաւ ներ-  
կայ լինելով՝ կը զաղարէր փեսայն լինել,  
ուստի այս կարելի էր:

Չարմանալի բան է. այն որ ժԹ գարու  
քննասէրք գիտեն, քրիստոնէական եկեղեցին  
Բ գարուն յի անցնելու պահուն կը մտանայ,  
և կը խանէ հարսանիքը սպոյ հետ: Կը մա-

\* Տե՛ս իմ Հայ եկեղ. պարզի. օրերն. 7-8.  
\*\* Սահակ վրէ. պատարագի նորահաստատ  
աւուրց մէջ կը վճռէ իբր հնադոյն զշաբաթն.

« Ըստ իս՝ նախ շաբաթ օրն է, որ կիրակէին  
բախտին կը վերակէ »: Պատճառը. — ոչ ոք  
գիտէ:

ուանայ զայն նա և Լաւոյդիկեայ ժողովն, որ կանոնելով՝ թէ «Չ արժան ի բառասնորդս նուիրել զհաց, բայց միայն յաւուր շարաթու և կիրակի» (կան. ԽԹ), շիրոհի թէ Հարկ էր չորեքշաբթին և ուրբաթն այլ արգելու ըստ կարծեցեալ աւանդութեան եկեղեցւոյ Բայց այս չէ ինչ. այլ եկեղեցւոյ Հիմնադիրն այլ կը Հանդիսանայ մի և նոյն անդիտութեան մէջ իւր աւանդածին, և Հարսանեաց խորհուրդը կու տայ երբ իւր շարաբանք կը սկսէին, «ի գիշերին յորում մատուր», ըսելով իւր մարմնոյն Համար՝ թէ քաշիս՝ խոշարանգի, և արեան Համար՝ թէ հեղու իւր պատառուած երակներէն. յաւելլով միանգամայն, «Չայս արասիք առ իմոյ յիշատակի» (Ղկ.), այն է իւր մահւան, ինչպէս առաքեալն յիշելով նոյն խօսքը՝ կը մեկնէ. «Քանիցս անգամ թէ ուտցե՛ք զհացս զայս՝ և զբաժակս ըմպիցե՛ք, զեանն տեսն պատուեցե՛ք» (Ա կոր. ԺԱ, 26)։ Ոչ, մեծ. Նաշարիթեան, Յիսուս և Պաւլոս կ'ուզեն՝ որ պատարագի մէջ յիշեմք Գորգովայի ցուազին տեսարանը, յիշեմք և սգամք, ոչ թէ այդ աղիողորմ տեսարանի Հանդէպ Հանրանիք ընծայք։ Եւ եթէ «բիշ մ'ալ բնական կերպով խորհինք», պատշաճն այն էր՝ որ այդ տիուր յիշատակը կատարուէր բուն իսկ շարաբանաց օրը, ուրբաթուն, ինչպէս յարութեանը կիրակին։ Բայց որովհետեւ Հաղորդութիւնը միանգամայն հասարակաց հոգեւոր սեղան է, որ Յիսուսի անգամքս կը բերէ միացնել իրարու Հետ ըստ առաքելոյն, «Մի Հաց մի մարմին եմք բազումըս, զի ամենեքեան ի միովէ Հացէ անտի վայելեմք» (Ա կոր. Ժ, 17), ուստի եկեղեցին ի սկզբանէ Հետ ժողովոց Հետ կապած էր զայն, և սովորութիւն ըրած էր այդ սեղանը կազմել այն օրերն, յորս Հաւատացեալք արիթ ունէին ի մի ժողովելու, ինչպէս է եօթնեկի մէջ հանգստեան օրը, միաշաբթի, ստորմի կանգնուած կը մատչէր, և բորոք առաջակայք կը Հաղորդէին։ Եւ եթէ այդ ժողովումն լինէր նա և ուրբաթ օր, Բնչ բան կը պակասէր շարաբանաց յիշատակը շարաբանաց օրը կատարելու, թէ կ'ուզէք՝ ուրա-

խութեամբ Հանդերձ, — եթէ անհրաժեշտ Հարկաւոր իսկ էր այս, — երբ պահը կը լուծուէր իննբորոք ժաման ըստ ս. Փրուկատուանաց, և երբ արդէն «Հաղորդութիւն սուրբ Հացին՝ օրուան սուգն կը փարատուր» ըստ Պատկերիդ։ Եւ Բնչ բան կ'արդելու մեղ ուրեմն Տերտուղիանու և Որիկինեայ աւանգածը Հացի բեկումն իմանալ ք դարուն։

\* \* \*

Իմ Գ դիտողութեամբ ակնարկած էի Հանապազօրեայ պատարագին զդրութիւնը շատ կանուխ բան ԺԱ դար, ՄԵԾ. Նազարեթեան կը զիջանի ընդունել զայս, բայց յաւելլով «յարեւուտս»։ Ես կարծեմ թէ լաւագոյն կը լինէր մեր մէջ եւս Հին լինելը խոստովանել, նկատելով Խորովու անձեւացւոյ ըսածը Ժ դարուն՝ թէ «Չոյն (զբաւութիւն) և սուրբ պատարագան օր ըստ օրէ շնորհեցէ» (մեկ. պոր. 12), և իւր որպոյն Նաբեկացւոյ խօսքը, «Չի ոչ եթէ մաքրութեանը աղբիւր պարտական գոյ մահու յօր ըստ օրէ կատարելն» (Աղ. ՄԳ), և այլն։ Այլուր\* շատ վկայութեամբք ցուցած եմ զայս իրբ ընդհանուր սովորութիւն ի մեզ Ժ դարու մէջ, և Թ դարուն եւս լինելը՝ սիւնեաց Գրիգոր Սուփանի իշխանի արձանագրութեամբ, զոր Հոս կրկնելն աւելորդ կը Համարիմ։

\* \* \*

Պահոց պատարագը Պատկերն ըստ իւր մտաց մեկնելէ յետոյ, իմ «Ե և Չ դիտողութիւնքն ի սպաս աննշանակ և աւելորդ կը նկատու»։ Սակայն ես այդպէս չնկատեմ ի միասին առաջնոյն, պահոց իննբորոք ժամու Գործութիւնը թէ նոր պատարագ լինէր և թէ նախաորբեալ, կիրակիէի պատարագն երբեք թէ նոյնպէս իննբորոք ժաման մատչելու խնդրել կը զատուի, և կը մնայ նշանակելի և կարեւոր։ Եւ մինչ նա երբորդ

\* Հայ եկեղ. պորդ. օրերն և տեսակներ, 394

ժաման կը գնէր, իմ ի Հարանց վարուց (Ա, 185) և յՈսկատանիս (Ա, Ա) առած վկայութիւնք ի նպատակ իններորդ ժաման՝ կը ցուցնէին ընդ հակառակին սովորութիւնաց անմիաբանութիւն նախկին գարուց մէջ :

\* \* \*

Գալով վեցերորդ դիտողութեանս, մեծ Նազարեթեան կը հաւատտէ՝ թէ ազգային ազդեցութեանը պէտք չէ զերծած, երբ պատարազի այժմեան համառոտութիւնն աստեալան ժամագրոց մէջ՝ կը շարունակէ կարծել նոյն ընդ նախարարեցոց պատարագին, «Չոր յոյնք և մերս եկեղեցի ունէր և պահած է, կամ թէ չունէր և առած է. բաւական է որ ունի այսօր» : Ըսելով «կամ թէ չունէր և առած է», կը թուի ընդունել կարծիքս, հակառակ իւր ընծայած մեծ հնութեան, թէ ժէլ գարուն հարուստ է այն՝ համեմատ իւր գոյութեան ժամանակին զըջագրաց մէջ :

Սակայն կը բաղձայի որ ընդունէր եւս, թէ յունաց նախարարեցոց պատարագին բուրդովին տարբեր մի բան է այն՝ ըստ բազում պիտոց : Նախ՝ ըստ ծագման, որով մինչ յունականն է գարուն կը յիշուի, մերս հարկ ժէլին յերեւան կ'ընէ, ինչպէս ըսի : — Երկրորդ՝ ըստ կազմութեան : Ան այս բաւական է կշռել յունականին հոյ թարգմանութիւնը որբինեանց ժամանակի\* և այժմեանը, և տեսնել մեծ վիհը երկոցունց մէջ : — Երրորդ՝ ըստ այժմեան գործածութեան, որով մինչ յոյնք քառասնորդաց մէջ միայն կը պաշտին զայն (բայ ի շարքիս և կիրակէ՛՛ յորս կը պատարագեն), ի մեզ քառասնորդաց և առաջատարց մէջ չկայ. և կը պաշտի սրբիչ որ և է անպատարագ օր, և ոչ թէ չորեքշաբթի և ուրբաթ միայն, ինչպէս կ'ըսէ Պատկերը, կոչելով եւս զայն

պսոնց պատարագ. և ոչ միայն այժմ, այլ և իւր ստեղծման ժամանակ այս այսպէս էր. ըստ որում ժամամուտք, սաղմոսք, շարականք և այլն ամենայն «ըստ խորհրդոյ» կամ «ըստ պատշաճի աւուրն» գրուած և նշանակուած են հոն՝ ամենայն աւուրց համեմատ : Դարձեալ՝ յոյնք զխորհուրդն ի սեղան կը հանեն աղօթից ժամանակ և կը հազորդին, մեր մէջ և ոչ մին : Նոքա կ'երգեն ինչպէս ի պատարագի, մեր մէջ ամենայն ինչ ի թիւ կը պաշտի :

Ուրեմն թող ներուի ինձ ըսել՝ թէ հայն իւր բնաւ չունեցած կամ բազում դարբեկ հետէ թողած սովորութիւնը չէր կարող առնուի յունաց ժէլ գարուն : Այլ պարզապէս՝ երբ հանապազօրեայ պատարագը զպարեցաւ, փոխանակ այնոր հնարեցին և գործածեցին զայն իբր մասն ինչ ժամերգութեանց որոց հետ միացած կը վարի :

\* \* \*

Է դիտողութեամբս կը ցուցնէի ի ծունր աղօթիչը նա և արտաբայ պահոց : Պատկերը կը կրկնէ թէ միայն պահոց յատուկ էր այն, իբր թէ լինելով «նշան սոյլ և պահոց» : Միկ. Արեղիտս կայսեր օրով մետիլինացի բրիտանոնեայ զօրուն ծնրադիր աղօթիչը՝ զոր կը յիշէի յԵսեբեայ, նա շհաւանի իմանալ արտաբայ պահոց :

Բաջ է. բայց ես կը հարցնեմ. երբ Ստեփանոս քարանց տարափի ներքոյ ծնրադիր աղօթեց քարաձողաց համար, երբ Պետրոս ծնրադիր աղօթեց և յարոյց զԱյծեմիկ, երբ Պաւլոս Միլիտանայ և Տիրոսի արքայացի վերայ ծնրադիր աղօթեց մեկնելու պահուն, կամ Պոպիւայ հայրը բժշկեց\*\* և կամ երբ ս. Իգնատիոս իւր նահատակութեան յառաջ «ծունր եղեալ եղբարքն ամենեքումք, ա-

\* Որ կը զտնուի մեր զըջագրատան մէջ, և նոյնն հրատարակեցաւ հ. Գալթընեանի պատարագամատուցաց հետ : — Այս բառը զործածուած է ժամանակին յունամերձ հայոց ոմանց և եռօք. այլ ոչ ընդհանուր ազգէն, ինչպէս յայտ-

նի է օրինակաց սակաւութեան և յայլ ծանօթ պատճառաց :

\*\* Գրծ. առ. է. 39. Թ. 40. Ի. 36. ԻԱ. 8. ԻԸ. 8 :

դաշէր զորդին Աստուծոյ վասն եկեղեցեաց, և վասն դազարման հայածանաց, և վասն սիրոյ եղբարց որ առ միմեանս» (Վկայ. իւր, 2), և վերջապէ՛ս՝ երբ մելիտոնացի զօրը պատերազմէ յառաջ նախ աղօթեց ի ծոնը, ինչպէս ըրին և այլ բազում նահատակք (Վկայաբ.), այդ ամէն զիպտածը «սոյո և վահան» օր հանդիպեցան, և այնոր համար դռքս ի ծոնը աղօթեցին: Եօթնեկի մէջ երկու պահոց և հինգ ազատ օր կային. այդչափ զկար հինգ օրէն վրիպեցան և երկուց մէջ միայն պատահեցան: Լուկ զԱստուած աղաչելոս համար հարկ է եղեր ծոնը դնել, և այն՝ պահոց մէջ: Բայց արդեօք ճեր ո՞ր ֆանսպարտօրեայ աղօթիցն աղչանք մէր, կամ շունի մասն աղաչանաց: Կամ հին ըրիստոնեայք եօթնեկի մէջ երկու օր միայն կարօտ և պարտաւոր էին աղաչել զԱստուած, և աւելի ոչ:

Ո՛չ, Սահակ վրդ. ըրիստոնէութիւնը ծնրադրութիւնն առած է ի հրէից, ինչպէս յայտնի է, որք պահք և ուտիք չխտրէին այդ ձեւով աղօթելու: Սողոմոն իւր տաճարի նաւակաւանեաց օրը նոյնպէս կ'աղօթէր (Պ թագ. Ը, 54). Դանիէլ «երիս ժամս յաւուր (ամէն օր) գնէր ծոնը և կայր յաղօթս» (Ձ, 10): Քրիստոնեայք եւս նոյն սովորութեամբ կ'երթային, զարտուղելով միայն կիւրակի օրս. Յուսարիտոս և Տերտուղիանոս այդ օրէն միայն կը զատեն ծնրադրութիւնը\*, և ոչ թէ չորեքշաբթուի և ուրբաթու միայն կ'ընծային զայն: Եւ հոս կ'արդարանայ Եւսեբի՛ թէ «որպէս և մեր սովորութիւն ունիմք յաղօթս կալոյ», այն է ծնրադիր բոս մետիւլինացուցն, ցուցնելով այսու աղօթից ընդ հանուր, այն է ամբողջ եօթնեկի (բաց ի կիւր.) սովորութիւնը: Չայս ուրիշ կերպ չէ կարելի հասկանալ. Եւսեբի ապաքէն հոս կը շեշտէ սովորոյթիս մի. և եթէ պահոց յատուկ լինէր այն, հարկ էր յիշել՝ թէ

պահոց օր էր. շեշտել մի առանձին աւուր սովորութիւնը՝ առանց նշանակելու այդ օրը, անսեղութիւն կը լինէր: Վեց օր ի ծոնը և լուկ մի օր կանգուն աղօթելը տես և Նիկիոյ ժողովոյն հետագայ կանոնին մէջ\*\*.

Կիրակէի յատուկ սովորոյթը սակայն Դարուն սկսած էր հաստատուի միւս աւուրը կերպին հետ. այսոր համար Նիկիոյ ժողովը սահմանեց, թէ «Հաւատացեալք յաւուրս կիրակէից և յինանց մի արասցեն աղօթս ի ծոնը իջեալ, այլ յոտին կալով» (կան. ի). և զիտեմք՝ թէ նախի ժողովը որ և է կանոն չկարգէին՝ առանց տեսնելու այնոր հակառակ ընթացք եկեղեցւոյ մէջ:

Թէ այդ զանցառութիւնը մոռացուեցամբ էր, մէկ արդէն շատ եկեղեցիք սկզբունէ հետէ չեն ունեցած ի կիրակէի կանգուն աղօթել, և ժողովն ուրից որ ամէն ընդունին զայն, չգիտեմ: Բայց լաւ գիտեմ, որ Մամբրէի պատարագչին ի ծոնը աղօթելն հիմնուած էր այդ քաղմաց յատուկ սովորութեան վերայ: Այն, Պատկերն որչափ և գծովն՝ դասնանայ՝ այլ յայլմէ լինէ այդ վերջին վկայութեան հանդէպ, ես սակայն վերստին իւր առջեւ պիտի հանեմ այդ ուրուականը՝ Փաւստոս հոն մի քահանայի յատուկ սովորութիւնը չէ որ կը յիշեցնէ (Ե, ԵԸ). նորա համար այդ պատարագչին ոչ ըրածը նշանակութիւն ունի թնաւ, և ոչ նորա անունը, զոր և ոչ կը յիշէ: Այլ իւր նպատակն է հոն կատարուած հրաշքը պատմել, Յիսուսի երեսունի խորհրդեան մի թերահաւատ եղբոր: Եւ իւր ընթերցողաց իմացնելու համար՝ թէ պատարագի ո՞ր կիտին մէջ եղաւ այն, կը յիշեցնէ ընթերցողաց ծանօթ վայրկեան մի՝ իւր հանգամանօք. այն է՝ երբ երէցն յիս տերունական աղօթից «եզ ծանր և կայր յաղօթս յերկար. և մինչդեռ երեւալ էր նորա ծանր և կայր յաղօթս»: Կարգացողաց ծանօթ այդ պարագայը ուրեմն պա-

\* Նա և յինանց օրերէն բոս Յերոնիմեայ: մեկն. Եփես. յուրն. և բոս ի կան. Նիկիոյ:  
 \*\* Բայց չըսեմ՝ թէ բացարձակ սովորութիւն էր այդ: զի արտաքայ կիրակէի եւս կային

կանգուն աղօթողք: Ինչպէս յայտնի է հին արձաններէ (Մարտինի. Բաւա. ըրեսա. հն. 686), և ի վկայաբանութեանց:

տարագին էին և ոչ թէ Գ զարու մի առան-  
 ձին թափանայի. և Հետեւաբար ամէն թա-  
 կանայ այդպէս կը պատարագէր, որով և ի  
 հիշարակէի այդպէս ի ծոռեր կ'արթնէին մեր  
 մէջ այլ. և այն, կը կրկնեմ, զեռ յետ ժո-  
 ղովոյն Նիկիոյ եւս Ուտոի մի ծծածան չէ  
 հոս զարնանաբերն, այլ երամ մի. և կար-  
 ծեմ՝ թէ Պատկերը պարտի տեղի տալ այդ  
 «ամենազօր» երամին, և չըսել զիտնակա-  
 նօրէն, «ոչ ս. Հացին բեկումն ծնրարու-  
 թեամբ կը կատարուէր, և ոչ ծնրազրու-  
 թեան օրն ս. Հացի բեկումն» :

\* \* \*

Գամբ Ը և վերջին դիտողութեանս, այն  
 է՝ թէ մեր նախնիք երբեք կիրակէի Հետ  
 կայած շնն Յիսուսի ծնունդը, որպէս կարծէր  
 մեծ. Նազարեթեան: Նա փերբուարի երկրորդ  
 պրտին մէջ այս «խնդիրը կը թողու յա-  
 ջորպ պատեհի. զի պարզ կատակ և կարծիք  
 մ'է անձնական», ուրիշ բացատրութեամբ  
 ափ յափոյ: Եւ ահա ինքնին կը բերէ այդ  
 պատեհը, և կը սկսի իմ դեմ պաշտպա-  
 նել... Իմ կարծիքը, թէ մեր մէջ եւս ծը-  
 նունդը միշտ ամենայն աւուր Հետ կապուած  
 էր, առ այս միայնութիւն բերելով ի մեր  
 հարց՝ զանազան զարբէրէ: Յորս կը փափա-  
 քէի յաւելալ է զարէն Անանիայ շիրակունայ  
 Հետեւեալս այլ, թէ յայտնութիւնն (ծնունդ)  
 «յորում աւուր զիպի և տօնեմը» (ի յայտ-  
 տեանն):

Միանգամայն կը յուզէ նոյն տօնին վե-  
 րաբերեալ ուրիշ խնդիրներ, թէ ծննդեան  
 բուն թուականն սրն է, և թէ զեկեմբերի  
 25ին թէ յանուարի 6ին տօնուած է ի մեր  
 նախնեաց: Եւ որովհետեւ այս խնդիրը դի-  
 տողութեանց սահմանէն դուրս են, չուզեմ  
 երկար խօսել հոս: Այլ միայն նկատմամբ  
 առաջնոյն կը հրաւիրեմ Պատկերի ուշա-  
 դրութիւնը երկու կիտից վերայ. նախ՝ Յով-  
 Հաննու մկրտչին և Յիսուսի յղութեանց ժա-  
 մանակաց համեմատութեան վերայ: Չայդ  
 կատարեց անցեալ տարի Արեւելեան մամուլ  
 մէջ (թիւ 3) Մ. Յ. Պաշապանեան՝ բաւա-  
 կան հմուտ հատուածով մի. իբր պիտուր

Հիմն առնով, ինչպէս ըրած են Անանիա  
 շիրակունի և Շնորհալին, առ աստուածածինն  
 աւետարեթ հրեշտակին խօսքը Նիխարեթի  
 համար, թէ «այս վեցերորդ ամիս է նորա»  
 յղութեան (Ղկ. Ա, 36), որ եղած էր յետ  
 ինչ պաշտաման Չաբարիայ (անդ. 23),  
 այն է թըրի ամսոյ 23ին կամ հոկտեմբերի  
 10ին. յորմէ ճիշդ վեց ամիս յետոյ, որ ժա-  
 մանակագրական հաշուով կը լինի 7 ապրի-  
 լի, Յիսուսի յղութիւնն եղաւ. և յետ ինն  
 ամսոյ՝ 6 յանուարի՝ ծնունդը: — Բայց այս-  
 պէս խորհողը Ղուկասու բանից լաւ ուշ չզրկին:  
 Կ'ըսէ նա՝ թէ հրեշտակն եկաւ «յամանեանն  
 վեցերորդի» յղութեան Երիտաբեթի, այն է  
 ամսոյն մէջ. և թէ «այս վեցերորդ ամիս է  
 նորա», որ է՝ դեռ կը շարունակի վեցե-  
 րորդը, և ոչ թէ լրացած էր այն օր. ուրեմն  
 աւետումն եղաւ ապրիլի 7էն կանոնի. և ըստ  
 այնմ ծնունդն այլ յանուարի 6էն յառաջ:  
 Յղութեանց խնդիրն ինչպէս այլ հաշուի,  
 սակայն աւելի պարզ է աւետարանի միւս  
 տեղին, թէ Յիսուս երբ մկրտեցաւ՝ «էր ա-  
 մաց իբրեւ երեսնից սկսեալ» (Ղկ. Գ, 23):  
 Եթէ նա ճիշդ ծննդեան օրը մկրտուած լի-  
 նէր, պիտի ընծայուէր իրեն միայն այնչափ  
 տարի՝ որչափ որ ունէր այդ օր. այն է ըսան  
 և ինն. և սովորական լեզուով՝ երեսներոր-  
 զին տառչին օրը չկարէր ըսուիլ՝ իրեռ և  
 րեւնից: Աւետարանիչը կ'ըսէ եւս՝ թէ երե-  
 սանն սկսած էր, և ոչ թէ կը յուսէր այն  
 օր. ուրեմն երեսներորդին մէջ յառաջացած  
 էր արդէն. որով ծննդեան և մկրտութեան  
 օրերն իրարմէ Հետացած էին: Գ զարու հարց  
 ոչ օրինակը և ոչ իրենց ժամանակի սովորու-  
 թեան վերայ հիմնուած հաշիւը՝ — ինչպէս  
 այլ մեկնուին նոքա՝ — կարծեմ թէ շնն  
 կարող այտօր հակառակ ժամանակագրական  
 ուղղապոյն հաշիւ մի տալ մեզ ծննդեան  
 Փրկչին:

Իսկ զառով սր ամսոյն մէջ տօնուած լի-  
 նելոյն, մեծ. Նազարեթեան լաւ կ'ընէր  
 վերստին կարգաւ ուշով իմ հատուածը, ուր  
 պիտի տեսնէր՝ թէ և ես նախ ըսն զինք  
 ցուցած եմ ծննդեան և մկրտութեան ի  
 միասին տօնուիլն յանուարի 6ին՝ ընդհա-  
 Հանուր արեւելեայց մէջ ցի՞ գար, որով ինքն

այգու մի նոր բան չըսէ: Յուրացած եմ դար-  
ձեալ, թէ զատ տօնելն այլ իւր ասանդական  
հնութիւնն ունի արեւմտեայց մէջ:

Իսկ մեր ազգի սովորութեան նկատմամբ,  
ոչ երկդիմի՝ այլ մեկին բանիւք — թէ և ա-  
նախորժ իւր համար — հաստատած եմ ի  
վկայութենէ է զարու պատկառելի հզօրնա-  
կութեան մի՝ Շիրակունւոյ՝ և այլոց, թէ մեք  
եւս մինչեւ յունաց զատելն երկու տօները՝  
միացած եմք տօնած, և յետոյ՝ ցՁ դար  
զատ տօնած. ապա բաժանմամբ հայոց ի  
յունաց՝ վերստին միացուցած: Ահա կը  
կրկնեմ Անանիայ վկայութիւնը. նա յետ  
նսելու՝ թէ Դ դարուն զատեցին յայնք առ-  
հերբը, կը յաւելու. «Քանզի ոչ եթէ չեհաս  
ի նոսա (ի հայս), և վասն այնր չընկալան  
(երկու տօնախմբութեանց անջատումն), այլ  
յառաջ քան զբազում ժամանակս՝ (յայտ-  
նի է թէ երբ այլք սկսան)՝ և մերս եկն յաշ-  
խարհ, (ուրեմն յառաջ մեր մէջ եւս միացած  
էր), և ընկալեալ եղի որպէս յանգէտ ե-  
ղելոց ճշմարտութեանն. և հարուստ ամս  
ձգեալ՝ մինչեւ ցերեանելին Յոհանս կամօղի-  
կոսն՝ որ ազգաւ մանդակունի էր, և ապա նա  
ի խնդիր եղեալ ճշմարտութեանն\* և քննեալ  
և հասու լեալ՝ թողուլ հրամայէ» (ի յայտն.  
տետան): Յիշած եմ զարձեալ մի այլ յի-  
շատակարան, որ այդ վերստին միացումն  
աւելի ուղիղ կերպով Աշտարակացւոյն կու  
տայ՝ Քաղկեդոնի ժողովոյն պատճառաւ: Ու-  
րեմն հայք ոչ «եթէ ժամանակ մը», այլ  
հարուստ ամս, իբր երկու դար, և ոչ «մաս  
նական» այլ ազգովին, կարողիկոսով, «հե-  
տեւեր են իրենց մերձակայ ժողովրդոց առ-  
վորութեան». և այդ ժամանակ այլազգ չլին  
կարող վարել. և «առաջինին դառնալ» ոչ  
թէ «երկրորդին տկարութիւնն կը յայտնէ»,  
այլ եկեղեցական գծտութեան արգասիքն էր:  
Մասնականն և տկար՝ յի դարուն վերստին  
անջատումն էր երկու տօնից՝ զոր յիշած եմ  
նախայիշեալ հաստատածիս մէջ:

Ի վերջոյ կը յայտարարէ մեծ. Նազա-

րեթեան, թէ ինքն ունի մի կշիռ, որոյ մի  
թափը կը հասնի ի Դ դար և միան յԹԹ,  
և այնու կ'ուզէ չափել մեր եկեղեցական ա-  
ւանդները: Իւր այդ և նման բանից ներքոյ  
ինձ կը թուի լսել ժամանակիս միամիտ ա-  
ղաղակները. մեր եկեղեցին ամենէն հինն  
է. այլք արաւաղեր են, նա միայն պահած  
է հին եկեղեցւոյ կնիքը: Այլ ես խոնարհա-  
բար կը յայտնեմ, որ այդպիսի հակայական  
կշիռ գործածելն ուժէս վեր է, չեմ և ես  
տիտաններէն: Եւ փոխանակ յեղու մի դարու  
վերայ՝ յորում չունիմք զիր և սեփականու-  
թիւն, և մի ուրիշ դարու՝ յորում ալէկոծին՝  
ըստ իս՝ զիր և սեփականութիւնը, վ'ընտրեմ  
«միջանկեալ ճօճանաց» վերայ մարել իմ  
նաւակը: Քոյովին է մեծարկն ազգային ա-  
ւանդութիւնքը. բայց աւելի գովելի՝ մեծարել  
ճշմարտութիւնը:

Հ. ՎԱՐԴԱՆ ՀԱՅՈՒՆԻ



### ԳԵՂԵՑԿԱԳԻՏՈՒԹԻՒՆ

(Շար. տես յէջ 173)

Գ Ր Ա Կ Գ

ԵՆԹԱԿԱՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԸ ԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԳԵՂԵՑԿԱՆ

Գ Լ Ո Ւ Խ Գ

Միջավայրը, մորապիտութիւն և մորատեսութիւն.  
— Ժամանակիմ ազդեցութիւնը. — Ընդհանուր  
մարդկութեան վիճակիմ և բարոյական եղելու-  
թեանց մը վրայ գործած տպաւորութիւնը. —  
Գիղեցկիմ ազդեցութեան աստիճանը:

Միջավայրն իւր ընդարձակ և բազմաոյզ  
ամբողջութեան մէջ՝ ցեղեցկութեան քանի մը  
ձևեր միօրինակ մեզ ենթարկելով՝ անտակ  
մը ըղեղային բեռացում (polarisation) կը  
գոյացնէ շնորհիւ սովորութեան. այնպէս որ  
յանկարծաճաս այլազան տպաւորութիւն մը

\* Զի Շիրակունւոյն կարծեաց հակառակ  
էր միացած տօնելը: